ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2020-3-6-Ա

ք. Երևան 22.07.2020թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2020 թվականի հուլիսի 22-ի նիստում քննարկեց 2020 թվականի մարտի 23-ին Ս. Գազազյանի կողմից ներկայացված «Արթնար 17» ՍՊԸ ընկերության (Երևան, Ռուբինյանց փողոց 21/3 շենք, բնակարան 19, ԱՄ) բողոքը «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ SAUSAGE FOR BREAKFAST КОЛБАСА ДЛЯ ЗАВТРАКА» (№20190965) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017 - Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ Կարգ) 93-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված հիմքերով գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առևտրում ծառայում են ապրանքի արտադրության կամ ծառայության մատուցման ժամանակը, ապրանքի կամ ծառայության տեսակը, որակը, քանակը, ստեղծման նպատակը, արժեքը, աշխարհագրական ծագումը կամ այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ SAUSAG FOR BREAKFAST КОЛБАСА ДЛЯ ЗАВТРАКА» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն բնութագրում է ապրանքի տեսակը, այն է՝ «նախաճաշի երշիկ»-ը, որն առավել հայտնի է ԱՄՆ-ում, որպես «գյուղական» երշիկ (breakfast sausage), պատրաստվում է հիմնականում խոզի մսից և մատուցվում է առավոտյան, քանի որ ունի բարձր կալորիականություն, և օգտագործվում է բազմաթիվ մսամթերք արտադրող ընկերությունների կողմից: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ: Ինչպես նաև տեղեկացնում ենք, որ հայտում նշված՝ 29-րդ դասի ապրանքների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման,

քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և Կարգի 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի վրա առկա «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ» գրառումը նշում է կոնկրետ ապրանքի տեսակը և չի համապատասխանում հայտում նշված մնացած ապրանքներին և սպառողին մոլորության մեջ կգցի ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում:

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթները բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ: Հայտարկված «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ SAUSAG FOR BREAKFAST КОЛБАСА ДЛЯ ЗАВТРАКА» նիշը ենթակա չէ գրանցման, որպես ապրանքային նշան, քանի որ այն բնութագրում է ապրանքի տեսակը, այն է՝ «նախաճաշի երշիկ»-ը, որն առավել հայտնի է ԱՄՆ-ում, որպես «գյուղական» երշիկ (breakfast sausage), պատրաստվում է հիմնականում խոզի մսից և մատուցվում է առավոտյան, քանի որ ունի բարձր կալորիականություն, և օգտագործվում է բազմաթիվ մսամթերք արտադրող ընկերությունների կողմից: Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն ապրանքային նշանը չի կարող բաղկացած լինել միայն այնպիսի տարրերից, որոնք ենթակա չեն գրանցման որպես առանձին ապրանքային նշաններ: Ինչպես նաև հայտում նշված՝ 29-րդ դասի ապրանքների համար, հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների բնույթի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշի վրա առկա «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ» գրառումը նշում է կոնկրետ ապրանքի տեսակը և չի համապատասխանում հայտում նշված մնացած ապրանքներին և սպառողին մոլորության մեջ կգցի ապրանքների բնույթի և տեսակի վերաբերյալ հարցերում:

Բողոքարկողը ներկա չէր նիստին և համաձայն էր առանց իր ներկայության այն անցկացնել:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ կայացված որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում

բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Արթնար 17» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «ՆԱԽԱՃԱՇԻ ԵՐՇԻԿ SAUSAGE FOR BREAKFAST КОЛБАСА ДЛЯ ЗАВТРАКА» (№20190965) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՆԱԻՐԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ